

շարքի. Ճին միայն մեր հիւսիսային արեւ-  
մտակողմը բազգեք լերին գազաթը կ'ե-  
րեէր՝ արեւուն ճառագայթիւք փայլելով  
ուրիշ լեռներու միջն։ Արստագինար (Ա-  
ղըստեէի) կայսրանին քով ճամբան թողլով  
Գանձակայ գիծը՝ դարձաւ մտաւ կուրաց  
հովտին տխուր ամսյութեան մէջ, ուր հա-  
զիւ հազ թաթարաց դիւզ մը կ'երեէի, որոց  
տուներն ալ գետնաթաղ խրդաց բնակա-  
րաններու կը նմանին։ Այս միջոց տեղս ալ  
կայ սովորատակ ճամբայ մը շինուած, բայց  
այնպէս աւրուած է՝ որ ցամաք եղանակին  
զայն թողլով խոպան դաշտէն կ'երթան ան-

ցորդք, Ճամբան կը հասցընէ յանուանի  
Կորմիր կամուրջն, այսպէս կոչուած իր  
աղիւսոց համար, Պարսից ատեն ջնուած  
է և ամուր չէնք, Խրամ գետոյն վրաց ձրդ-  
ուած. Նշանաւոր բան մ'ալ այս է՝ որ կա-  
մուրջն խարսխաց վերեւ պարապ միջոց  
թողած է կարաւանատան ծառացիւր հա-  
մար. Այսէ անզին ճամբան ճանձրանալի  
եղաւ տաքուն պատճառաւ, ինչուան որ մօ-  
տեցանք ի Տփղիս. ուր երթեւեկ մարդկան  
սկըսաւ շանալ և երկիրն կենդունանալ.  
բայց երբ քաղաք մտանք (սեպտեմբերի  
21ին) գիշերուան մութն ալ վրայ հասաւ,

## Ա.ՐԴԻ ՇԻՐԱԿԱՑԻՐ ՌՈՌԻՍՍ.Ց ՀԱՅԱՍՏԱՆԻ

Մեր յարգելի պատմահայրն Խորե-  
նացի, ազգային նահապետաց տեղա-  
գրութեան պատմութիւնն ընելով, երբ  
կը հասնի Հայկայ անմիջական յաջոր-  
դին՝ Արմենակայ նոր սաւառնում մը  
կու տայ իր բարձրախթոիչ մտաց թեսյն,  
և ինքնին զմայլեալ ընտրողին հետ  
տեղւոյն վրայ, ոսկեդարեան գրբ-  
չովս կը տողէ այսպէս. « Իսկ Արմե-  
նակայ առեալ զամենայն բազմու-  
« թիւնն, խաղայ յարևելս հիւսիսայ, և  
« երթեալ իջանէ ՚ի խորին դաշտավայ-  
« րի մի ՚ի բարձրագագամաթանց պարըս-  
« պեալ լերանց, գետոց կարկաջասահ  
« ՚ի յարևմտից ընդ մէջ անցանելով, և  
« զդաշտն արևելյց իմն դողցես իրը որ-  
« սայսեալ, ձիգյարեգակն կոյս վերկայ-  
« նութիւն պարզեալ. և առ ստորոտովք  
« լերանցն բացում ականակիտ բդիսեալ  
« ազրիւրը, որ գետոց հաւաքումն ե-  
« ղեալ հեղալքար առ սահմանօք նոցա,  
« ձնիք լերամբը և եղերօք դաշտին՝  
« պատանիք ումանք իրը երիտասարդու-  
« հիք ճնկիցին։ Այլ հարաւայինն ա-  
« բեգակնաճեմ լեան, սպիտակա-  
« փառ ունելով գագամին, ուղղորդ ՚ի  
« յերկը բուսեալ, երեքօրէիւ, որպէս  
« ասաց ոմն ՚ի մերոցն, քաջագոտուց  
« առն շրջապատեալ ճանապարհաւ,  
« և առ փոքր փոքր ՚ի շշտումն անկեալ,

« ծեր ոմն արդարեւ լեառն ՚ի մէջ երի-  
« և տասարդացեալ լերանց : Յայսմ խո-  
« րութեան դաշտի ընակեալ Արմենա-  
« կայ, շինէ զմանսն ինչ ՚ի հիւսիսայ կող-  
« « մանէ գաշտին, և զոտն լերինն ՚ի նոյն  
« կողմանէ, և զիեառն անուանէ յան-  
« գագոյն յիւր անուն Արագած, և զկա-  
« « լուածմն՝ Ռան Արագածու : . . . » Եւ  
« մէկէն կ'աւելցընէ լերան միւս կողմին  
համար ալ, թէ Արամայիս Արմենակայ  
որդին՝ Զորդին իւր զհարայ, զյուր-  
« վածին և զշատակեր, առաքէ ամե-  
« նայն աղիխւ իւրով ՚ի դաշտ մի մօ-  
« և տաւոր, արդաւանդ և բարի, յորում  
« գնան ջուրը ոչ սակագ, ՚ի թիկունս  
« հիւսիսայ լերինն, որ անուանեցաւ Ա-  
« րագած. յորյա անուն և զդաւառն ա-  
« սեն անուանել Շիրակ :

Ականատեսն զայս պրակը կարդա-  
լով՝ նորէն տեսածի պէս կ'ըլլայ Արա-  
գածու հարաւակողման ջրոց սաստիկ  
առատութիւնը և հիւսիսակողման ալ  
նուազութիւնը. և Արագածու ալես-  
րեալ գագամիտան կանոնաւոր իմն ճըլ-  
ճելը ու ծուելը, որ իրաւցընէ ծեր յ"է  
փորձ վշտաց ու աղետալի տառապա-  
նաց, աղու արտասուօք թացեալ ձիւնա-  
թոյր ալեօն գդուած՝ միջիթար կը մա-  
տուցանէ իր տիրատեսիլ և բաղմահա-  
առ լեռնորդեացը՝ խորհրդաւոր ա-

գաւոնի ակնկալութեամբ։ Թէպէտ Շիրակայ համար է յորում զիւսն ջուրք ոչ սակաւք, սակայն կ'երևայ մեղ որ Արագածու հիւսիսակողման ոորքն դէպ 'ի Շիրակ ուղղուած գետերն կամ 'ի բնէ կամ յարուեստէ նոյն լերան ստորոտին ուղղութենէն շատ հեռացած չեն, որով արենելքան Շիրակ գոնէ հիւսիսային մասամբ յրակարօտ կրնայ ըսուիլ։ Այսու հանդերձ Արագածն մեծ մարգասիրութիւն ըրած կ'ըլլայ իր ըստորոտին ուղղութեան վրայ բնակող Շիրակացւոց տպիտութեամբ խառն անհոգութեան, եթէ մարտէն ինչուան վարդավառ զրիէր իր յրամբարներէն։ վասն զի յիշեալ ուղղութեան վրայ աւելի բնակնան ձորեր ու ծմակներ գտնուելով քան թէ գետոց կանոնաւոր անկողինք, վերը յիշած ժամանակը գալուն պէս Արագածու գագաթան ձիւնափայլ հին և նոր մազերն կը սկըսին թափիլ, և ահեղ որոտմամբ կը լցուին ձորք ու ձորակը յրախառն ձեան մեծամեծ հիւսերով, և գուրս կը զեղուն ոչ միայն 'ի վտանգ և 'ի մնաս արտօրէից ու դաշտաց, այլ և անասնոց ու մարգկան։

Կայ գետ մը կարկաջ անուն, որ Արագածու սանդղաձև շղթային հետքիչ մը հեռու զուգահեռական բնակչաց միակ ապաէնն է, որուն սաստիկ ծամածութիւնը նշան է թէ բնութեան հարագատ զաւակ չէ, այլ արուեստին ծնունդ։ որուն ծագումն, բնթացքն, ուր թափին և արուեստին անոր վրայ ըրած ազգեցութեան չափը աշխարհագիտաց ու երկրագիտաց քննութեան թողլով, նկարագրենք միայն համառօտիւնոյն գետին վրայ յինուած անճար տարապետ գործարանները՝ որով Շիրակացին իր արմբախը մաքրէ, մանրէ ու 'ի մնունդ պատրաստէ։

Զրաղացն Շիրակացի հարուստներուն անկորուստ զրամագլուխներէն մէկն է իր բազմաշահ օպտութեամբը. վասն զի կրնայ ապահով անհէ իր տարենոր ապրուստը հաննել առաւելամ հանդերձ, և իր երկիրներն ալ անպա.

կաս կը պողաբերեն. որովհետև որուն ցորեան որ կ'աղայ՝ տասին մէկը յրաղացին է։ Զրաղացներուն գործունէու թիւնն նկատմամբ ցորենի տէրերուն աշնանամուտին է ու գարնան. աշնան նորէն ցորենը ալերացնելով՝ շահաստաներ կը տանին վաճառելու ու իրենց զգեստեղիններ և ուրիշ ձմեռուան պիտոյներ հոգալու համար, իւրագան չիւրն ըստ իրեն պիտոյից. գարնան ալ իրենց մշակութեան ու գործեաց պիտոյից և տէրութեան հարկին համար կ'աղան ցորեան որպէս զի ծախսն։ իսկ նկատմամբ յրաղացաց՝ գործունէու թիւնը կը սկըսի մարտէն և կը շարանակուի ինչուան յուկիս, օդոստոս. վասն զի մարտին կը սկըսին սառերուն հալելովն՝ յրերն առատանալ, թէ և գարնան ամիսներուն մէջն ալ երբեմն չըս սղութիւն կ'ըլլայ յրաղացաց՝ յրարբի արտերուն պատճառաւ, սակայն ոչինչ է նոյն յեմերը ու գեկուեմբեր ամսոց սղութեան քով. յորս յրերը սառած՝ հազիւ յրաղացին մէկքարն կրնան դարձնելը։

Զրաղացաց յինուածոյն ստուերագիծը շատ տարբեր չէ Շիրակացւոց տներու ստուերագիծն զօր պիտի նկարագրենք, բայց միայն ըստ թուոյ աղացող յրաղացաց՝ երկայնաձև են. և աղացող քարանց թիւլ տեղացիք այք բառով կը բացատրեն։ Միշտ գետը՝ որով կը գառնայ յրաղացը՝ բարձր պիտի ըլլայ քան զըրաղացին յատակը, այնպէս որ յրերը մեծ փողակն կամ օլուշին ըստ տեղայն բարբառոյ՝ ուղագիծ կենայ և ոչ թէ սաստիկ առ 'ի շեղ. Օլուշին բերնին դիմաց ուղղակի կեցած է բազմաթև անիւ մը, որ չէնքի տակէն երկրիս հետ հորիզոնական զիրքով և իր միջակետէն անցած ուղղահայեաց գերանասպն կը հաղորդի և կ'անցնի ստորին հաստատուն քարի միջակետէն, և ընդ մէջ ստորին անշարժ և վերին շարժական քարին եղած գերանի մասը՝ երկմաս հաստատթեամբ քառաթեն երկաթէ անիւ մ'է, որ ճիշդ պիտի փակուի շարժական քարին, որուն է բուն աղալու պաշտօնն, ստորին

մասին վրայ։ Ֆուլը կը թողուն օլու-  
խէն, ըստ կամաց ալիւրի տիրով և ջա-  
զացպանի գիտութեան՝ առատ կամ  
քիչ։ Հուրը կը դարձընէ զրազմաթե ա-  
նիւն և այն ալ զալլրքար. որ փոթոր-  
կելով երագ երագ առանցքին վրայ կը  
դառնայ, ու չահւախն՝ որ փայտ մ'է  
՚ի կախ կեցած՝ վերը շրս սիւնի վրայ  
յեցած, ամբարին և այն սիւներէն մէկուն  
մէջ տեղէն, դրդուելով ցորենը կտուցի  
ծակէն սորաորէ՝ ՚ի վայր ալլրքարին ծա-  
կին մէջ կանոնաւող կերպով։ այսպէս  
հետ զիետէ ցորենը ձիւն դարձած մաս-  
նաւոր ձևով մանայ յալլրտուն. վերջա-  
պէս եւրոպական ջրաբաշխական կո-  
չուած աղօրիքն է՛ իր պարզութեամբը  
միայն տարրեր, Եթէ աղալու ցորեն կամ  
գարի չըլլայ. Ծուրին ուրիշ անկողին մը  
շիներ են հօն դարձնելու. և սոյն տե-  
ղի թումբ կեցող գործին սաւածանայ կո-  
չուի. Եթէ աղալու շատ բան ունի՛ և  
ուրիշի մը կարգ չկրնար տալ՝ կ'ըսէ ա-  
ղուն շատ ունիմ։ Յայսմ մասին Շիրա-  
կացին շատ անդամմ մեծամեծ վնասներ  
կը կրէ, մասամբ իր անհոգութեան  
պատճառաւ, մասամբ ալ ջաղացպանաց  
և գործեաց կամ շէնքին անյարմարու-  
թեան։ Ցորենը աղալէն առաջ սաս-  
տիկ շրնալու պէտք ունի. և ընդհա-  
կառակն ամենեին հոդ չըներ ցորեն-  
նոյն արեգկողմն շինելու, այլ ան-  
խոտոր հետևող իրեն հայրենաւանդ  
անօգուտ մանաւանդ թէ վնասակարա-  
գոյն սովորութեան՝ չի թողուր իրեն  
խոնաւուս ստորերկրեայ ցորեննոցները.  
անոր համար շատ անդամմ կամ խոնա-  
ւութեան ճարակ կ'ըլլայ ցորեանը կամ  
մկանց կեր։ Օրերով կը փուեն կը չոր-  
ցընեն մեծամեծ կապերաներու վրայ,  
որ են մեծամեծ բբդեղէն օֆոցներ.  
վասն զի քարայտակ տեղեր չկան. Յետ  
չորնալու՝ տէրութենական չափով կը  
չափեն. մեծ չափը սոմարն է, տէրու-  
թեան չափով 16 կոտ. որուն չորրորդ  
մասն է սորապին և ոռուպին չորրորդ մասն  
ավորձն է։ Զափուած ցորենները ջրա-  
զացը կը կրուին, հօն կարգի սպասե-  
լով։ Կայ ուրիշ աչք մ'ալ ջրազացին

տինկ անուն, որով ցորենը ձաւար զի-  
նեն կեղել հանելով. էական գործի-  
ներն նոյն են վերը յիշած ալիւր ա-  
զացող ջրալացին հետ, բաց ՚ի քարէն՝  
որ չափաւոր քարայտակ ասպարիզի  
մէջ իր առանցքին վրայ թաւալգոր կը  
դառնայ. ցորենը կը գնեն կամ փուն  
ասպարիզին մէջ, և քիչ մ'ալ ջուր  
սրսկելով՝ երագ ընթացք կու տան քա-  
րին, ու ասպարիզին չորս կողմ կեցած  
պատիկ թիերով միշտ շրջընեն ցորեա-  
նը, որպէս զի շատ չի ջախջախուի, զոր  
իրենք բացատրեն լիզել բայցով։

Գանկ հիմն իրենց հաց և կեր ե-  
փող վառարանին, որ է յիշատա-  
կաց արժանի թոնիրին կամ բաննըլին,  
բունետիր ըստ տեղացւոց։ Մեղք ու կէս  
խոր և գրեթէ նոյնչափ տրամադծով  
ձևաւոր կարաս մ'է թալլուած տանը  
կեղրոնը անմիջապէս երգիբին դիմացը,  
ուր արեգակնահայեաց մեծ պատու-  
հան մը կայ։ Այս թոնիրին ստորոտը  
ծակ մը կայ՝ որուն ուղղութեամբը  
ստորերկրեայ փողրակ մը կը դրուի հա-  
մապատասխան ծակով մը դուրսի օդին  
հալլորդելով զկրակը բորբոքելու հա-  
մար. երկու համապատասխան ծակերն  
ակն կոչուին և զարտաքին ծակը գո-  
ցող խուփն ակնկալ։ Ժամերով առաջ  
պէտք է պատրաստել խմորը. որ ձմե-  
ռը սովորաբար գիշերուան 3ին կամ 4ին  
կ'ըլլայ, և առաւուը 8ին կամ 9ին կրնայ  
եփել կամ ըստ տեղացւոյն բիսել. բայց  
ամառը վեցին, եօթնին ալ կրնաս շա-  
ղել և ատենին խմորած գտնել. խմո-  
րող զանգուածն բիբիւնը կոչուի, ո-  
րով կոչմամբ թթուահամ ժայռասէր  
բոյս մ'ալ գտնուի։ Երբ խմորած է՛  
սեղանաւասիստակին վրայ գունտ  
գունտ բաժնած կը գնեն հաւասարա-  
մասն. այս հաւասարամասն գնտիկ-  
ները՝ հայեփեցն կամ իր օդնական  
գրտնակողն՝ գրտնակ անուն գլանի-  
կով մը կը պարզէ որչափ կ'ուզէ, ըստ  
ուղած նրբութեան և մեծութեան հա-  
ցին, և զրած բարար գործւոյն վրայ,  
որ ուղած հայրին ձևով երեսի բարձի  
նման շինած գործի մ'է, թոնրին սաս-

տիկ կրակով յերամացած կողքին վրայ կը փակցնէ զիւրութեամբ, թէ և ինքը բխողն նեղի և տանջի չարաշար. և կը շարունակէ մինչև ցաւարտ հետ զհետէ եփածներ հանելով ու իրարմէ հեռու փոելով: բաթալին կը հպատակի միշտ ուղած հացին ձեին. իրեք միայն հացի ձեւ յիշեմ յանուանէ. շառաշ կամ լոլ (փիտէ), ամենանուրբ և թղթանման հացն. ճակուշիկ՝ պատրանջանի ձեռվ մէջը ծակ՝ անոր համար ծակուցիկ կոչուած, և պոքոն տեսակ տեսակ է. կայ ուրիշ ձեւ մ'ալ կոչու կոչմամբ և քուրիկ. որոնց ձեւ թխողին ձեռքը չէ, վասն զի երր հացեփեցը կարգաւ շարէ հացերը թոնրի շերմա. յերմ կողիցը վրայ՝ այլ և այլ պատճառաւ երբեմն ամբողջ խմորեղէն գնտիկն երբեմն ալ կիսով շափ կողը չռոնելով՝ վար միխրի վրայ կը թափին ու կ'առնուն իրենց ուղած ձեր. եթէ ամբողջ է կոչու կոչուի, եթէ 'ի մասնէ' քսուիկ. թէ պէտ և քսուիկ բառը որ և իցէ բանի մը գէշ մնացորդը կը նշանակէ: թոնիրի մէջ միշտ շափ մը կրակ արծարծ պիտի պահուի որ անքեղ կը սուի, որոն յանկարծ մարիլը չուառութեան մը կարապետ սեպուի ռամկին բազմակարծ մոտաց մէջ. և թոնրի խառնարանն անդրոց կամ անդեղ կոչուի, որովհետև գործածուի աւելի պահծու կրակն ծածկելու մոխրով ու բանալու: Յիշածնիս բողորն ալ պարզ հացագործութեան վերաբերեալը են. որովք ոչ միշտ ցորենի ձիւնափայլ հացն եփուի, այլ երբեմն, և դժբախտաբար շատ անգամ, գարիէ նկանակը ալ կ'եփուին. թէպէտ և անդարար է և ընտրելի սովոր ու սղութեան ատեն:

Յիշենք և կերակուր եփող գործիքներն ալ, որոնցմէ նախակարգն է խաչըրկար կամ ուղիղն խաչերկար, եր-

կամեէ թոնրի վրայ զիրար կարող կրկին տրամագիծք, թէ և երբեմն մի պարզ տրամագիծք է, որուն վրայ կը շարուին կերակորոց պուտուկները: կայ ակիշն ալ երկաթակուռ գիսաւար աստղի նըման թի մը, որով թոնրի կողէն դըմուարանշատելի հացն քերեն հանեն, թոնիրը բան մ'ընկած ըլլայ աղատեն և երբեմն ալ իր կուածագ ծայրովն թոնիրը իջուցած եփելի կերակուրներու պուտանց խուփը դուրս հանելով՝ համատես ընեն կերակոյն:

Տեղացւոց վիճակն և կիմային ծայրացեալ ցրտութիւնն և տաքութիւնը անհրաժեշտ հարկ մը գարձուցեր է տաք ու թժուահամ կերակուրներ չինեն: Յիշենք հօս քանի մը սովորական, քմապարար կերակուրներ առանց զանոնք նկարագրել յանձն առնելու: Ամենածանօթ արկելեան կերակուրնիշիշաւ, սամիր, ամազ, կորկուտ, հերիսա, քայլիկ, տոլմա, քոշդիտ, ձորագեղ, միխոր, պիշի, խաւոխմա, ածիկ, քեսաձօշ. տաքութեան ատեն միակ զովարարն բանապուր է, որ կարծեմ թէ Սուրբ Գրոց ոսպնաթանն ըլլայ, որով տապախարշեալ որսորդն եսաւ վաճառեց անդրանկութիւնը: Մարդիկ միակերպութիւն կոտրելու միտմամբ և իրենց իւրաքանչիւր տօնին և հանդիսին ներքին զգացման տարբերութեան 'ի նշան՝ զարմանալի համաձայնութեամբ ճաշակնին ալ հպատակի են տարեկան տօներուն. անոր համար նիբակացին ալ և կրնամ կարծել բոլոր Հայաստանեայք՝ ներիսան Ծննդեան քրիշին եփեն, սամիրն 'ի Վարդավառին պատրաստեն, 'ի Համբարձման ձուագեղ և միխոր, խաւոխմա 'ի Բարեկենդանին, ամազ և կորկուտ 'ի տօն և յերկորդակարգ հանդիսի աւուրս. քայլիկ, պիշի և ածիկ մեծ պահոց մէջ:

Եր շարունակուի: